

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼԺԿ-ի ՌԴՍՈՒԹԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳԱՐԾՄԱՆ
ԳԻՏՈՎԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՑՈՒՏ

2802 - 1

Հեռակա կոնսուլտացիա սկսնակ ուսուցչին

ՀՀ Արմ.

3-4386a



ԽՆՋԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՅԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼ ԴԱՍԸ

ՀԱԲ. № 15921

371

9-15

ՀՈՒԽՐԱՑ

Տերեան



1940

Ա. ՉԱԼԹԻԿՑՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՄԱՆ, ՅԵՎ. ԱՆՑԿԱՅՆԵԼ, ԴԱՅԲ

Դասը ուսուցման պրոցեսի հիմնական ողակն եւ և պարունակում եւ յերկու կտրեռ մոմենտ՝ ա) դասի նախապատրաստումը և բ) դասի անցկացումը:

Ա. ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՄԱՆԻՄԸ

Դասի ճիշտ կազմակերպման առաջին և գլխավոր պայմանը դասի նախապատրաստումն եւ Ուսուցիչը պետք եւ նախապատրաստի ինչպես ամրող թեման, այնպես ել յուրաքանչյուր դասը:

Դասի նախապատրաստման համար անհրաժեշտ եւ վորոշել.

1. Դասի տիպը և նպատակը.
2. Դասի բովանդակությունը և ծավալը.
3. Դասի սարքավորումը.
4. Մանկավարժական աշխատանքի ձևերն ու մեթոդները:

ԴԱՅԲ ՏԵՊԸ ՅԵՎ. ՆՊԱՏԱԿԻ

Ուսուցիչը նախ և առաջ պետք եւ պարզ և հատակ պատկերացնի, թե ինչ տիպի դաս եւ կազմակերպելու և ինչ և լինելու այդ դասի նպատակը: Այս չափազանց կտրեռ մոմենտ եւ, վոր մուացության չպետք եւ տար քանի վոր միայն վորոշելով դասի տիպը և նպատակը՝ ուսուցիչը հնարավորություն կունենա ճիշտ կերպով ընտրել համապատասխան դիտակարիկ նյութեր, վորոշել աշխատանքի ձևերն ու մեթոդները:

Դասը կարելի յեւ բաժանել հետեւյալ տիպերի:

1. Ա. ցածի կրկնության և տերացման դաս, ուսուցիչն այդ ամրող ժամը նվիրում եւ անցած նյութի (թեմայի կամ բաժնի) կրկնությանն ու յուրացմանը:

2. Գիտելիքների ստուգման և հաւաքուման դաս, յերբ անցած թեման կամ բաժնը կրկնելուց և խորացնելուց հետո, ուսուցիչը ցանկանում է ստուգել աշակերտների գիտելիքները և հաշվի առնել, վորքանով ևն նրանք յուրացը կամ բաժնը:

Այդ նպատակով կատարվում է գրավոր ստուգողական աշխատանք:

3. Նոր գիտելիքների հաղորդման դաս, յերբ նախորդ որը ուսուցիչը կրկնել եւ անցած նյութը կամ կատարել գրավոր ստուգողական աշխատանք, այժմ, ամրող դասը նվիրում է նոր թեմայի բացատրությանը և այդ նոր բացատրած նյութի շուրջը կատարում է վարժություններ:

4. Խառը տիպի դաս, վորտեղ տեղի յեւ ունենում և անցածի կրկնություն և նոր նյութի բացատրություն ու նրա շուրջը վարժություններ:

Դասերի մեծ մասը խառը տիպի յեւ լինում, ուսուցիչը տանը հանձնարարած աշխատանքները ստուգելուց և հին դասը կրկնելուց ու ամրացնելուց հետո, տալիս ենոր դաս, կատարում վարժություններ և հանձնարարում համապատասխան տնային աշխատանք: Բայց խառը տիպի դասերի հետ, պետք եւ տեղի ունենան նաև մյուս տիպի դասերը:

Դասի տիպից և նպատակից փոփոխվում եւ դասի ամրող կառուցվածքը, փոփում են՝ դասի բովանդակությունը, աշխատանքի ձևերը, դասի կահավորումը և դիդակտիկ նյութերը:

Այս բոլորը պարագագեցնում եւ յուրաքանչյուր ուսուցչին դասին նախապատրաստվելիս նախ և առաջ վարածել դասի տիպը և նպատակը:

ԴԱՅԲ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ. ԾԱՎԱԼԻ

Դասի տիպը և նրա նպատակը վորոշելուց հետո, ուսուցիչը նյութի ընտրություն է կատարում, վորը սերտ կերպով պետք եւ կազմակերպելու մինի նախորդ դասի նյութի հետ: Ուսուցիչը դասագրքից ընտրում եւ այն հոդվածը, խնդիրը, վորոնք դասարանում են անցնելու, լուծելու, վորոշում և աշակերտներին տանը հանձնարարելիք աշխատանքը, նշում եւ լրացնելու գրականություն, վարչությունը կարող է ոգնել նյութի խորացմանը:

Նոր դասի նյութը պետք ե՞լ ա) համապատասխանի ծրագրին և չխախտի ծրագրի հաջորդականությունը, բ) ծավալով չպետք եւ մեծ լինի, վոր 45 լուսկեյում հսարավոր լինի անցնել և յուրացնել տալ աշակերտներին, գ) պետք եւ հետաքրքիր լինի և աշակերտներին մատչելի, դ) պետք եւ հագեցած լինի կոմունիտական դասարակության ելեմենտներով՝ արտացոլի մեր սուցիալիստական շինարարությունը, զարգացնի յերեխաների մեջ ինտերնացիոնալիստական, հակակրօնական վողին, ատելություն սերմանի դեպի ժողովրդի թշնամիները և ներշնչի անտառման սեր ու նվիրվածություն՝ դեպի մեծ հայրենիքը, նրա հերոսներն ու աշխատավոր մարդկության Մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Դաստիարակչական այս բոլոր մոմենտները պետք ե սերտ կապված լինեն ծրագրային նյութի հետ, տարգին սիստեմատիկորեն յուրաքանչյուր գասի ընթացքում, կապվին համապատասխան դասի բովանդակության հետ և չըրեն պատահական, կամ պահիոն բնույթի:

ԳԱՅՈՒՄ ՍԱՐՔԱՎՈՐԻՄԻՄԸ

Դասի բովանդակությունը և ծափալը վորոշելուց հետո, ուսուցիչը պետք ե մտածի դասի կահավորման մասին, այսինքն նախապատրաստի այն գիղակտիկ նյութերը, վորոնք պետք ե ոդտագործվեն դասը հետաքրքիր և հասկանալի դարձնելու համար և ոգնեն աշակերտներին հեշտությամբ յուրացնելու անցնելիք նոր նյութը:

Այդ սարքավորմանն են վերաբերվում՝ շարժական տառերը, թվարանական համրիչներ, աղյուսակներ, աշխարհագրական քարտերներ, գեղարվեստական նկարներ՝ բանավոր խոռքի դարգացման համար, քերականական աղյուսակներ, սխեմաներ, միկրոսկոպ, ֆիղգիկական կամ քիմիական փորձեր, կորեկցիաներ, հերուրաբիում, գիտականներ և այլն: Դասի բովանդակության համաձայն ուսուցիչը պետք ե նախորոք պատրաստի համապատասխան դիդակտիկ նյութը, անհրաժեշտ փորձը՝ ներգրավելու այլ աշխատանքի մեջ բարձր դասարանների աշակերտներին (որինակ, աշակերտների միջոցով կարելի յե գծել տալ գիտագրամներ, քերականական աղյուսակներ, սխեմաներ, մեծացնել այս կամ այն նկարը, պատրաստել փորձը և այլն): Այդ՝ մի կողմէց ոգնում և ուսուցչին, անտեսում նրա ժամանակը, մյուս կողմէց՝ ունի դաստիարակչական մեծ նշանակություն:

Դասի պլանավորման կարեռագույն մոմենտներից մեկը, մանավանդ սկսնակ ուսուցչի համար, առարկայի փաստացի մատերիալի ամբողջական և ճիշտ յօւրացումն է: Այդ նպատակով յուրաքանչյուր ուսուցիչ դասին նախապատրաստվելիս պարտավոր է:

ա) Նայել և մշակել դասագրքի համապատասխան նյութերը.

բ) Զբարձրագիր միայն դասագրքի նյութերով, այլ կարգությունը պահպահությունը՝ աշակերտներին ավելի ծավառուն և լայն բացարություն տալու նպատակով.

գ) Նախորոք լուծել այն ինպիրները և վարժությունները, գծագրել յերկաչափական գծագրերը (թեորեմներն ապացուցելու ամար), նախապատրաստել ֆիզիկական և քիմիական այն փորձերը, վոր կատարվելու յեն դասարանում:

դ) Նախորոք ձևակերպել և գրի առնել այն յեղակացությունները, վոր դասի ընթացքում աշակերտների տեսքերում պետք ե գրգիւն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵԲԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՈՒՆԵՐԸ ԴԱՅՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Յերբ ուսուցիչն արդեն վորոշել ե դասի տիպը և նպատակը, նշել ե դասի բովանդակությունը և անհրաժեշտ դիդակտիկ նյութերը, մշակել ե դասագրքի նյութը, կարդացել ե լրացուցիչ գրականություն, կատարել ե նախատեսված փորձը, լուծել ե ինպիրները, վերլուծել ե ընտրած նախադասությունները, այնուհետև նախադասությունները, այնուհետև մատածի մեր կուսակցության կենտրոնական կոսմիտեյի պատմական վորոշումներում նշված բազմապիսի մեթոդների կիրառման մասին, նա պետք ե նախորոք մտածի ու ընտրի աշխատանքի այն ձեերը և մեթոդները, վորոնց ճիշտ գործադրումն միջոցով ծրագրային նյութի ամենաբարդ բաժինը կարելի կլինի հեշտությամբ հասցնել աշակերտների գիտակցությանը:

Դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր ե ծրագրային նյութն իմանալու հետ միասին, լավ ուսումնասիրել նաև յասնավոր մեթոդիկաները (լեզվի, թվարանության, աշխարհագրության և այլն), լավ իմանալը, որինակ՝ ինչպես պետք է լուծել ինպիրն անալիտիկ և սինթետիկ մեթոդով, ինչն ե գրանահության հնչական վերլուծական-համագրական մեթոդի եյությունը, ինչպես պետք ե աշխատել շարժական տառերով, ինչպես պետք ե վերլուծել նախագասությունները, ինչպես կատարել փորձը գեմոնստրատիվ մեթոդով և այլն:

Աշխատանքի ձևերն ու մեթոդները բազմազան են և կախված են ուսուցչի պատրաստականությունից, փորձից, առարկայից, դաստիարակությունից, գասի տիպից, աշակերտների պատրաստականության մակարդակից և այլն, վորոնց մասին այժմ չենք խոսի: Մենք կանգ կառնենք միայն աշխատանքի ընդհանուր ձեերի և մեթոդների վրա, վորոնց կիրառելու դեպքում կարելի յե ապահովիլ դասի բարձր վորակը:

Աշխատանքի ընդհանուր մեթոդները հետևյալն են: —

1. Բարձր պահել աշակերտների կարգապահությունը, սովորեցնել աշակերտներին և պահանջել նրանցից դասարանում լուս լինել, լսել վոր միայն ուսուցչի բացարությունը, այլ և լսել ու հետեւ ընկերների պատասխաններին, աշակերտների ուղարկությունը կենտրոնացնելուց հետո միայն սկսել աշխատանքը:

2. Մեծ տեղ տալ կրկնությանն ու վարժություններին, յուրաքանչյուր նոր նյութ բացարեկից կրկնել նախորդ դասի գըլւիսի մոմենտները, հանդուցային կետերը և կապել նյութի հետ:

3. Նոր դաս տալ միայն այն դեպքում, յերբ ուսուցիչը հաւաքված է, թե անցած նյութը աշակերտների կողմից լավ է յուրացված:

4. Նոր նյութը բացատրել պարզ, մատչելի և պատկերավոր լեզվով՝ համապատասխան աշակերտների պատրաստականության:

5. Լայն ոգտագործել դիդակտիկ նյութերը, հաճախակի կաղմակերպել եքսկուրսիաներ, կատարել անհրաժեշտ փորձեր և այդպիսով տեսականը կապել գործնականի հետ:

6. Սիստեմատիկ կերպով ստուգել աշակերտների տնային աշխատանքները, հաճախակի հարցնել թույլ աշակերտներին և ոգնել նրանց՝ լավերին հասնելու:

7. Պետք է աշխատել դասի ընթացքում աշխատանքի լծեր դասին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին: Այդ նպատակով, թե նոր դասը բացատրելիս, թե աշակերտներին պատասխանելու ժամանակ, — ուսուցիչը պետք է իր տեսադաշտում պահի ամբողջ դասարանը: Ուսուցիչը չպետք է տարվի մի աշակերտի պատասխանով, զբաղվի միայն մեկով և անուշադրության մատնի մնացածներին: Նա ուշազրությամբ լսելով պատասխանող աշակերտին՝ մեծ ուշազրությամբ պետք է հետեւ նաև ամբողջ դասարանին և պարտադրի աշակերտներին՝ լուս լսել վոչ միայն ուսուցչի բացատրությունը, այլև ընկերների պատասխանները, վոր կարողանան վերջում ուղղել նրանց թույլ տված սխալները և անել անհրաժեշտ լրացումներ: Ուսուցիչը պետք է աշխատի աշակերտներին ակտիվ կերպով մասնակից դարձն ամբողջ դասին:

8. Հարցեր տալիս ուսուցիչը պետք է հարցն ուղղի ամբողջ դասարանին, վոր բոլորը մտածեն այդ ուղղությամբ և հետո միայն հարցնի մեկին:

9. Անհրաժեշտ է հատուկ ուշազրություն դարձնել հետ մի առողջ աշակերտների վրա: Այդ նպատակով դասի ժամին պետք է հաճախակի հարցնել նրանց, նորից բացատրել այն, ինչ լավ չեն հասկացել: Ճաշկերից հետո առանձին պարապել նրանց հետ և հասցնել իրենց ընկերներին:

10. Հիվանդության պատճառով բացակայող աշակերտների հետ ևս պետք է դասի դուրս գուրս պարապմունք կազմակերպել, բացատրել նրանց անցածը և այլպիսով կանխել նրանց հետամընացությունը:

Այս բոլորը դասի նախապատրաստման հիմնական կետերն են, վորոնք պետք է արտացոլվեն ուսուցչի որվա դասի պլանում: Ուսուցիչը նախապատրաստվում է դասի նախորյակին, սկզբում՝ ամփոփում և այդ որվա կատարած աշխատանքը, նշում կատարողականը, թերակատարման գեպքում նշում և պատճառները և պատասխանը:

Բ. ԴԱՍԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Դասին նախապատրաստվելը, դասը պլանավորելը դասի մեթոդապես ձիշտ անցկացման նախադրյալներից մեկն է, աշխատանքի միայն մի կողմը: Ուսուցիչը պետք է վոչ միայն նախապատրաստվի, պլանավորի անցնելիք նյութը, այլև կարողանանական կազմակերպել և անցկացնել դասը: Ամենահիմնականն այն է, վոր ուսուցիչը կարողանա աշխատացնել ամբողջ դասարանը, և վոր թե անհատ աշակերտներին: Իսկ ամբողջ դասարանը կարելի յէ այն գեպքում աշխատանքի լծեր յերբ դասը մեթոդապես ձիշտ և կազմակերպված:

Այս նպատակով նախ քան դասն սկսվելը (զանգից առաջ) ուսուցիչը դասարան և բերում կամ լաբորատորիայում պատրաստում, սլանում նշված այն բոլոր դիդակտիկ նյութերը (նկարներ, համրիչ, քարտելը, փիզիկական, քիմիական սարքեր, նյութեր և այլն), վորույք ուսուցողից յե դասի ընթացքում, և ներթափան աշակերտների միջոցով դասավորում և սեղանի վրա կամ կախում պատից: Ուսուցիչն ստուգում ե, թե դասարանում արդյոք կավիճ, ջնջոց, թանաք կամ: Անհրաժշտության գեպքում նա բաժանում և աշակերտների տեսրերը, թանաքամանները, գրիչները կամ մատիտները:

Դասի այսպիսի նախապատրաստումը հնարավորություն կտա ուսուցչին ուցիոնալ կերպով ոգտագործել դասի 45 բոպեն և վոչ մի բոպե անտեղի չկորցնել:

ԴԱՍԻ ԸՆԹԱՅԻՆ

Դասն սկսում է տնային աշխատանքների ստուգումով: Տնային գրավոր աշխատանքներն ստուգելուց հետո՝ դասատուն սկսում է հարցնել աշակերտներին տանը հանձնաբարված դասը և գնահատական նշանակում: Դասատուն հին դասը կրկնել և տալիս մի քանի անգամ, ամրացնում աշակերտների հիշողության մեջ, ամփոփում, հանում և անհրաժեշտ յեղբակացություն: Յերբ համոզվում է, վոր աշակերտները լրիվ չափով յուրացրել են հին դասը, անցնում են նոր դասի բացատրությանը:

Բայց նախ քան նոր նյութին անցնելը, դասատուն հայտնում է աշակերտներին այդ դասի նպատակը, վորպեսզի աշակերտները գիտակցաբար ըմբռնեն նոր նյութը և իրենց ուշադրությունը կենտրոնացնեն այդ ուղղությամբ:

Ավելի նպատակահարմար է, վոր հնարավորության գեպքում հարցերի միջոցով պատահանել մասնակից դարձնել նոր դասի բացատրությանը և ակտիվացնել նրանց՝ հարկադրելով նրանց ուշադրությամբ և հետեւ ուսուցչի բացատրությանը ու պատրաստմանը լինել պատասխանն լու ուսուցչի հարցերին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0211798

45. 973

Նոր գասը բացատրելուց հետո՝ ուսուցիչը պատր ու շաբանը
միջոցով ստուգի, թե աշակերտները վորքանով են հասկացել նոր
նյութը, պետք ե պարզի, թե ինչն ե մութ ու անհասկանալի
մնացել նրանց համար, վորպեսզի նորից բացատրի դասի անհաս-
կանալի մասը և այդպիսով լրիվ չափով հասկանալի դարձնի տ-
շակերտներին ամբողջ նոր նյութը:

Այնուհետև սկսվում ե աշակերտների ինքնուրույն աշխա-
տանքը, ուսուցիչ ոգնությամբ: Նրանք կատարում են բանավոր
և գրավոր վարժություններ:

Ուսուցիչն ուշադրությամբ լսում ե յուրաքանչյուրի պու-
տասխանք, հետեւում ե գրավոր աշխատանքներին, մոտենում, նո-
յում ե կատարած աշխատանքները, ուղղում ե սխալները և այդ-
պիսով յուրացնել ե տալիս նոր նյութը: Այնուհետև կատարվում
ե նոր դասի ամփոփում, հանվում ե յեղակացություն, վորից
հետո հանձնարարվում ե տնային աշխատանք:

Տնային աշխատանքը կարելի յե հանձնարարել կամ նոր
դասի բացատրությունից հետո, կամ դասի վերջին՝ 3—5 րոպե
դանդից առաջ, վորպեսզի աշակերտները հանգիստ կերպով լսեն
ուսուցիչ հանձնարարությունը:

Տնային աշխատանքն հանձնարարելիս պետք ե վոչ միայն
նշել հոգվածը, խնդիրների և վարժությունների հասարները,
դասագրքի եջերը, այլ անհրաժեշտության դեպքում բացատրել
նաև, թե ինչպես պետք ե կատարել այս կամ այն աշխատանքը:

Յուրաքանչյուր դասի վերջում աշակերտը պիտի կարողանա
հաշիվ տալ իրեն և պատասխանել ուսուցչի հարցերին, թե ինչ
նոր գիտելիքներ են սովորել այդ դասին, ինչ են կրկնել ու ամ-
րացրել հիշողության մեջ և ինչ աշխատանք ե հանձնարարված
տանը կատարելու:

Դասի ճիշտ կազմակերպումը միաժամանակ ապահովում է
աշակերտների գիտակցական վերաբերմունքը դեպի դասը, ամ-
րացնում ե նրանց գիտակցական կարգապահությունը, վորը ուս-
ման վորակի բարձրացման հիմնական պայմաններից մեկն եւ

Խմբագիր՝ Վ. ԱՍՏՎՅԱՑՐՅԱՆ

Սբբագրիչ՝ ՊՈՂՈՍՅԱՆ

Գլուխակի լիազոր՝ Դ-1040 հրատ. № 16

Պատվեր № 34, տիբաժ 1000

Հումարատի տպարան.

Տերեփան Տերյան № 127

Ц 1940 թ.

ԱԿՏ № 365

Եկամ. լ.